

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ապրիլի 2017 թվականի N 414-Ն

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 152-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել, որ եկամտային հարկով հարկման բազայի վերահաշվարկը կատարվում է՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև այլ օրենքներով սահմանված հիմքերով աշխատանքային պայմանագրերի լուծման դեպքերում՝ չաշխատած օրերի համար աշխատողներին վճարված արձակուրդային գումարները գանձելու նպատակով.

2) վարձու աշխատողի հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի գործունեությունը վերսկսելու դեպքերում՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մայրության նպաստի ավելի վճարված գումարի հետպահման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Կ. Կարապետյան

2017 թ. ապրիլի 21
Երևան